ԼՂՀ անվտանգության համար

ԱԺ օրակարգում երեկ ընդգրկվեց ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանի հեղինակած ԱԺ որոշման նախագիծ, որով ԱԺ-ն կառավարությանը եւ նախագահին առաջարկում է «ակտիվացնել եւ ընդլայնել ԼՂՀ խնդրի վերաբերյալ միջազգային հանրությանը լիարժեք տեղեկացնելուն ուղղված միջոցառումների մշակման եւ իրականացման ջանքերն ու հնարավորությունները», «ԼՂՀ խնդրի կարգավորմանն ուղղված հայաստանյան քաղաքականությանը հաղորդել ավելի նախաձեռնողական բնույթ» եւ «միջազգային իրավունքի շրջանակներում ձեւակերպել այն իրավական հիմքերը, որոնք Ադրբեջանի կողմից ռազմական ագրեսիայի կամ այլ բռնի միջոցների կիրառման դեպքում ՀՀ-ին հնարավորություն կտան ապահովել ԼՂՀ լիարժեք անվտանգությունն ու պաշտպանությունը»: Նախագիծը ԱԺ-ում կքննարկվի ապրիլի 10-ին: